



ԱԶԱՏ ՕՐ



«Ազատ օր» *Αρμενική Ημερήσια Εφημερίδα*

ԱԶԱՏ ՕՐ ՕՐՄԹԵՐԹ - 80^Պ ՏԱՐԻ - ԹԻԻ 23084

www.azator.gr

ԱԹԵՆԵ, ՈՒՐԲԱԹ 13 - ՇԱՐԱԹ 14 ՓԵՏՐՈՒՄՐ 2026 * ΑΘΗΝΑ, ΠΑΡΑΣΚΕΥΗ 13 - ΣΑΒΒΑΤΟ 14 ΦΕΒΡΟΥΑΡΙΟΥ 2026

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ատրպեյճանի հայատեաց քաղաքականությունը եւ «խաղաղության» գործիքաւորումը

Ատրպեյճանի պետական քաղաքականությունը Արցախի հարցին շուրջ կարելի չէ ընկալել իբրեւ ներկայ պահու գարգացումներէն թելադրուած վարքագիծ: Հետեւողական եւ տասնամեակներու վրայ կառուցուած ռազմավարութիւն մըն է, որուն հիմքը կը կազմէ հայատեացութիւնը՝ որպէս պետական գաղափարախօսութիւն, եւ անոր զուգահեռ՝ միջազգային հանրութեան ուղղուած «խաղաղասիրական» կեղծ դիմագիծի մը ամրապնդումը:

Վերջին տարիներուն, Պաքուի բռնապետին կողմէ համակարգուած քաղաքականութիւնը հասած է նոր փուլի մը, ուր ռազմական յաղթանակը կը փորձուի հաստատել քաղաքական վերջնագիրով ու պատմական իրականութեան այլափոխումով:

Հետեւողականօրէն հետապնդող այս ձեւագեղծումին մէջ պատահական չէ Նախ եւ առաջ Ե.Ա.Հ.Կ.-ի Մինսքի խումբի լուծարման որոշումը: Մինսքի խմբակը, իր բոլոր սահմանափակումներով, կը խորհրդանշէր այն իրողութիւնը, որ Արցախի հարցը լուծուած չէ, եւ որ ան կը վերաբերի ժողովուրդի մը իրաւունքներուն, որ տարածքի մը պատկանելիութենէն անդին, կը հետապնդէր արցախահայութեան հազարամեայ լինելութեան իրաւունքի վերահաստատումը: Միջազգային աստեանի չեղարկումը կը նշանակէ միջնորդութեան վերջ, այլ նաեւ Ատրպեյճանի կողմէ հակամարտութեան պատմական վերաշարադրում ուժի ապահոված արդիւնքը իբրեւ իրաւական փաստ ընդունիլ տալու փորձ:

Ատրպեյճանի մէջ կայացած կեղծ դատավարութիւնները եւ անցեալ շաբաթ անոնց հրապարակած դատավճիռները պէտք է դիտարկել այս խորապատկերին մէջ եւս: Անոնք չեն կրնար ընկալուիլ իբրեւ իրաւական գործընթացներ, այլ որպէս քաղաքական գործիքներ, որոնց նպատակը մէկ է՝ վերաձեւել Արցախի հակամարտութեան բնոյթը: Ինքնորոշման իրաւունքի վրայ հիմնուած ժողովուրդի պայքարը կը վերածուի «անշատողականութեան», բանակցային գոր-



ծընթացով ընդունուած քաղաքական ենթական կը դատուի որպէս «յանցագործ խմբակ», իսկ տասնամեակներու ընթացքին ձեւաւորուած միջազգային միջնորդութիւնը կ'անուանուի անիմաստ միջամտութիւն: Յստակ է, թէ այս դատավարութիւններն ու անոնց որոշումները նոր «խաղաքարտ» պիտի դառնան Ատրպեյճանի կողմէ առաւել շահ կործելու միջազգային դիւանագիտական թատերաբեմին վրայ:

Պաքուի ռազմավարութեան միջազգային ընկալումը նոյնքան ուշագրաւ է: Խաղաղութեան մրցանակներու, տնտեսական համաժողովներու եւ դիւանագիտական հարթակներու մէջ «խաղաղարար» կերպարի կառուցումը կը ծառայէ Ատրպեյճանի կատարած ոճրագործութիւններու պատասխանատուութեան վերացման:

Պաքուն կը փորձէ ստեղծել այն պատ-

կերը, թէ հակամարտութիւնը անցեալի հարց է, իսկ ներկայ փուլը տնտեսական գործակցութեան եւ տարածաշրջանային կայունութիւնը հետապնդող «խաղաղասիրական» գործընթաց մըն է: Նման բեմագրութիւն կը դիւրացնէ ապահովել միջազգային դերակատարներու քաղաքական լուծումը՝ բռնի տեղահանութեան, ռազմագերիներու, մշակութային ժառանգութեան ոչնչացման եւ վերադարձի իրաւունքը ընդմիջտ վերացնելու նկատմամբ:

Պարտադրաբար ստեղծուած իրավիճակին մէջ առանցքային խնդիր կը մնայ Հայաստանի իշխանութիւններու քաղաքական կեցումը: Երեւանի կողմէ վերջին տարիներուն որդեգրուած քաղաքականութիւնը հիմնականօրէն արձագանգող է, հեռու նախաձեռնող ըլլալու ակնկալութենէն: Պաքուի կողմէ պարտադրուած օրակարգերը կ'ընդունուին

իբրեւ անխուսափելի իրողութիւններ, առանց լիարժէք վիճարկելու անոնց քաղաքական եւ իրաւական հետեւանքները: Հայաստանի իշխանութիւններուն չկամութիւնը միայն արտաքին քաղաքականութեան թերացում չէ: Անխուսափելիօրէն, իշխանաւորներու վարքագիծը ունի ներպետական հետեւանքներ՝ պետական ամրապնդման եւ արժեքային համակարգի խաթարում, ազգի պատմական յիշողութեան եւ համագային իրաւունքներու աստիճանական վերացում: Պետութիւն մը, որ կը հրաժարի պաշտպանելէ իր ժողովուրդի հաւաքական իրաւունքները, կը սահմանափակէ նաեւ իր սեփական ինքնիշխանութեան քաղաքական բովանդակութիւնը:

Ատրպեյճանի հայատեաց քաղաքականութեան եւ անոր «խաղաղասիրական» դիմագիծի ստեղծման դիմաց կարելի է հակադրել միայն քաղաքական համախոհութեան ռազմավարութեամբ:

Քաղաքական նոր ուղի մը, հայութեան ուժերու միաւորումով, որ պէտք չէ հիմնուած ըլլայ զիջողութեան, այլ իրաւունքի, պատմական անվիճելի փաստերու եւ միջազգային պարտաւորութիւններու հետեւողական յիշեցումին վրայ:

Ի վերջոյ, ներկայ իրավիճակը միայն Արցախի հիմնահարցին մասին չէ: Ան կը վերաբերի Հայաստանի ապագային ու անոր շուրջ ստեղծուած անորոշութեան, առանց անցեալէն դասեր քաղած ըլլալու պատմաքաղաքական իմաստութեան, որ պէտք էր յատկանշէր հայրենի քաղաքական միտքը:

Արդեօք կարելի է՞ ուժով ջնջել ժողովուրդի մը պատմական իրաւունքները եւ ապա «խաղաղութեան» անունով պարտադրել այդ վերացումը:

Այս հարցին պատասխանը այսօր կը փորձուի ձեւաւորել Պաքուի հայատեաց գործողութիւններով, բայց նաեւ Երեւանի եւ միջազգային դերակատարներու լուծումը ու քաղաքական համաշունչ ընտրանքներով:

Պատմութիւնը, սակայն, միշտ կը յիշէ ոճրագործները: Նաեւ անոնց դիմաց լուծուած ժամանակակիցները:

Հրապարակային Զրոյց «Երէկ, այսօր, վաղը՝ միշտ միասին»



Զրոյցին կը մասնակցին՝
Լիբանանի «Ազդակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր՝
ընկ. Շահան Գանտահարեան
Հ.Յ.Դ. Յունաստանի Կեդրոնական Կոմիտէի անդամ՝
ընկ. Սերգօ Գոյումճեան

ՀՅԴ
135
ամեակ

Շաբաթ 28 Փետրուար 2026 երեկոյեան ժամը 7-ին, Գորինիոյ «Զաւարեան» Կեդրոնէն ներս
Կը յաջորդէ հիւրասիրութիւն - Մուտքը ազատ է



Հրապարակային ձեռնարկ

Հ.Յ.Դ. 135-ամեակ

«Երէկ, այսօր, վաղը՝ միշտ միասին»

Տեղի պիտի ունենայ Թեսաղոնիկէի «Տէր Զաքարեան» սրահէն ներս,

Կիրակի, 1 Մարտ 2026-ին, կէսօրուայ ժամը 12*ին

Կը բանախօսէ Լիբանանէն յատկապէս հրաւիրուած «Ազդակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր ընկ. Շահան Գանտահարեան

- Գեղարուեստական յայտագիր
- Պիտի յաջորդէ հիւրասիրութիւն
- Մուտքը ազատ է

«ԱԶԱՏ ՕՐ»Ի ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կը խնդրուի մեր հայրենակիցներէն, գաղութին մէջ գործող միութիւններէն եւ կառոյցներէն իրենց յայտարարութիւնները դրկեն ամենաուշը մինչեւ **ԶՈՐԵՔՃԱՔԹԻ ԿԷՍՕՐ**, եթէ կ'ուզեն Ուրբաթ օրուան տպագիր թերթին մէջ անոնք հրատարակուին:



Վարդանանց հերոսամարտի տօնակատարութիւն

Հովանաւորութեամբ գեր. Հայր Միքայէլ Վրդ. Պասալէի


Տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, 16 Փետրուար 2026, երեկոյեան ժամը 19:30-ին, Նէոս Գոզմոսի Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Տիկին Արտա Ճելալեան պիտի ներկայացնէ Յակոբ Ճելալեանի «Վարդանանց՝ սկզբնաղբիւր մեր բոլոր պայքարներուն» վերլուծական աշխատասիրութիւնը:



Պիտի յաջորդէ հայկական երաժշտութեան յայտագիր, կատարողութեամբ Վահան Գալստեանի (տուտուկ) եւ Լեֆթերիս Խաւուծասի (կիթառ) կողմէ:

Պիտի յաջորդէ հիւրասիրութիւն: **ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ**



Հրապարակի վրայ է

Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Վեհափառ Հայրապետի

«H ARMENIKH EKKLHSEIA» գիրքը

Յունարէնի թարգմանուած Նէա Իոնիայի եւ Ֆիլատելֆիայի Դարիիլ եպիսկոպոսին կողմէ

Ստանալու համար դիմել Ազգային Առաջնորդարան, հեռ. 210 3252067, առաւօտեան ժամը 10-էն

մինչեւ կէսօրուան ժամը 2: Գին՝ 15 եւրօ:

Հայ եկեղեցւոյ մասին գրուած համապարփակ եւ ամբողջական հրատարակութիւն մը, ուղղուած ընթերցողներու եւ գիտական ոլորտի լայն շրջանակներուն

Կ'ուզուի

Ֆիքսի «Արամ Մանուկեան» ակումբին համար խնամակալ կը փնտռուի: Ակումբը կարիք ունի մէկ կամ զոյգ խնամակալներու: Նախընտրելի է, որ զոյգ մը միասին ստանձնէ այս պատասխանատուութիւնը: Հետաքրքրուողները կրնան կապուիլ ընկ. Սեդրակ Այվազեանին հետ հետեւեալ հեռաձայնի թիւին 694 858 2581:

Եռօրեայ ուխտագնացութիւն դէպի Քսանթի՝ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հիմնադրութեան 100-ամեակի տօնակատարութեան առիթով



Կազմակերպութեամբ Յունահայոց Ազգային վարչութեան

Տեղի պիտի ունենայ 20-22 Մարտ 2026-ին, մասնակցելու համար եկեղեցւոյ հիմնադրութեան տօնակատարութիւններու շարքին:

Փոփոխութիւն

Ճամբորդութիւնը պիտի ըլլայ օդանաւով Աթէնք-Ալեքսանտրուփոլի-Աթէնք:

Մասնակցութեան սակ՝ 330 եւրօ անձ գլուխ:

Առանձին սենեակի պարագային՝ 400 եւրօ անձ գլուխ:

- Գինը կը ներառնէ օդանաւի երթուղարձի տոմսակ,
- Երկու գիշեր 4* հիւրանոցի մէջ նախաճաշով,
- Պանդոկի պետական տուրք,
- Փուլման ինքնաշարժ՝

Ալեքսանտրուփոլի եւ Քսանթիի մէջ:

Արձանագրութիւններու համար հեռաձայնել՝ տիկ. Շողիկ Տատոյեանին, 6951006278 եւ տիկ. Չապէլ Այվազեանին, 6932808972:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՉ ՄԱՐՄԻՆ



Լրատու



Կեանքէն հեռացաւ հայ մամուլի նուիրեալ սպասարկու Սարգիս Մահսերեճեան

Սարգիս խոր կակիծով իմացանք, թէ երեքշաբթի, 10 Փետրուարին, Լոս Անճելըսի մէջ իր աչքերը փակեց «Ազատ Օր»-ի եւ ընդհանրապէս դաշնակցական մամուլի անխնջ յօդուածագիր Սարգիս Մահսերեճեան:

Տասնամեակներու վրայ երկարող իր նուիրումը հայ գաղափարական մամուլին օրինակելի խթան հանդիսացաւ բոլոր անոնց համար, որոնք իրեն հետ աշխատելու եւ աշխատակցելու առիթը ունեցան:

Տարիներ շարունակ ան ձեռնհասօրէն վարեց Լիբանանի «Ազատ» օրաթերթի խմբագրական պատասխանատու պաշտօնները, կարեւոր ներդրում ունենալով նաեւ մարդու զարգացման:

Հետեւողական աշխատակիցն էր հայ գաղափարական մամուլին, եւ անոր կարգին «Ազատ Օր»-ին, որուն հետ գործակցեցաւ գրեթէ ամենօրեայ դրութեամբ Հայաստանի, Արցախի եւ հայրենիքը յուզող հրատապ ու հիմնական իրադարձութիւններուն մասին: Ան ունէր վերլուծական ու մեկնաբանական բացառիկ կարողութիւններ, յաճախ ամենօրեայ յօդուածներով հարստացուց մեր մամուլի էջերը, որոնց մէջ կ'արտացոլար դաշնակցական խմբագրի փորձառութիւնը եւ իրավիճակները մեկնաբանելու կարողութիւնը:

Սարգիս Մահսերեճեանի մահով, «Ազատ Օր»-ի ընտանիքը եւ ընդհանրապէս դաշնակցական մամուլը կը կորսնցնեն անխնջ ու նուիրեալ սպասարկու մը, որ գաղափարական հաստատութեամբ թողեց հարուստ ժառանգութիւն մամուլի անդաստանէն ներս, հրապարակագրական անսպառ գրիչի օրինակով:

«Ազատ Օր»-ի ընտանիքը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ Սարգիս Մահսերեճեանի ընտանիքին եւ պարագաներուն:

«Պատրաստ ենք համագործակցելու ընդդիմադիր ուժերուն հետ, եթէ անկէ կախեալ է այս իշխանութեան հեռացումը»: Սաղաթելեան

Հայաստանի Ազգային ժողովին մէջ լրագրողներուն հետ ունեցած զրոյցին ընթացքին, Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն մարմնի ներկայացուցիչ, «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր իշխան Սաղաթելեանը հաստատեց, որ «Հայաստան» դաշինքի ձեւաչափը պահպանելու փափաք կայ:

«Մենք ասել ենք, որ արժեւորելով «Հայաստան» խմբակցութեան գործունէութիւնը, նպատակ ունենք պահպանելու եւ այդ ուղղութեամբ բանակցութիւններ, քննարկումներ են տեղի ունենում: Ժամանակը կը գայ՝ մենք այդ մասին կը յայտարարենք», նշեց ան՝ ւաւելցնելով, որ Պաշտպանութիւնը սահմանաչափ յարթահարելու խնդիր չունի, սակայն հարցը այն է, որ ընդդիմադիր դաշտին մէջ պետք է ստեղծուին մեծ դաշինքներ, որոնք պիտի միաւորեն ջանքերը՝ ներկայի իշխանութիւններէն ձերբազատելու համար:

Ըստ անոր՝ դաշտին մէջ կան լաւ ընդդիմադիր ուժեր՝ իրենց գաղափարներով, բայց ակնյայտ է, որ իրենք շեմը յարթահարելու դժուարութիւն ունին: «Ի՞նչ իմաստ կայ այդ ձայները փոշիացնելու: Եթէ մեր համագործակցութիւնից է կախուած լինելու այս իշխանութեան հեռացումը, մենք պատրաստ ենք ընդդիմադիր ուժերի հետ համագործակցել»: Սաղաթելեան դիտել տուաւ, որ նոյնիսկ եթէ որեւէ ընդդիմադիր



Մեծ ուժ կարենայ հաւաքել 49 տոկոսի ձայն, սակայն իշխանափոխութիւն տեղի չունենայ «մենք դա պարտութիւն կը համարենք»: Ան նշեց, որ «Հայաստան» խմբակցութեան հիմքին վրայ բանակցութիւններ կ'ընթանան այլ ուժերու հետ, սակայն մինչեւ արդիւնքի հասնիլը նպատակայարմար չէ այդ մասին խօսիլը:

Ա.Մ.Ն. փոխնախագահը խօսեցաւ հայ գերիներու ազատ արձակման մասին

Պաքու մեկնելէն առաջ, Երեւանի «Չուարթընգ» օդակայանին մէջ լրագրողներու հետ զրոյցի ընթացքին Ա.Մ.Ն. փոխնախագահ Ծէյ Տի Վենսը ըսած է, թէ Պաքուի մէջ բանտարկուած հայ գերիներու հարցը քննարկած է Հայաստանի վարչապետին հետ: Պատասխանելով լրագրողի այն հարցումին, թէ արդեօք Պաքուի մէջ եւս պիտի բարձրացնէ հայ գերիներու ազատ արձակման խնդիրը, Վենս ըսած է. «Այդ նիւթը անպայման պիտի բարձրացնենք: Մենք ամուր ու դրական յարաբերութիւններ ունինք թէ՛ Հայաստանի վարչապետին, թէ՛ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւին հետ եւ իբրեւ այդպիսին, բացի այլ հարցերէ, այս նիւթը եւս պիտի բարձրացնենք, եւ կը կարծեմ, որ պիտի շարունակենք յաջողութեամբ համագործակցիլ թէ՛ ատրպէյճանցիներուն, թէ՛ հայերուն հետ»: Փետրուարի 9-10-ին Ա.Մ.Ն. փոխնախագահ Ծէյ Տի Վենսը պաշտօնական այցով կը գտնուէր Հայաստան, որմէ ետք մեկնեցաւ Ատրպէյճան:



Գախի ռազմաքաղաքական ղեկավարներուն եւ ուր հայ քաղաքացիներու դէմ կայացուած դատավճիռները:

Պաքուի ռազմական դատարանը Փետրուար 5-ին հրապարակած էր Ատրպէյճանի մէջ ապօրինաբար բանտարկուած Ար-

Եւրոխորհրդարանի պատգամաւորները կոչ կ'ուղղեն Ատրպէյճանին՝ ազատ արձակելու հայ գերիները

Եւրոպական խորհրդարանի պատգամաւորներ՝ Մարկելային իրաւունքներու ենթայանձնաժողովի նախագահ Մունիր Սաթուրի, Հարաւային Կովկասի հետ յարաբերութիւններու պատուիրակութեան նախագահ Նիլս Ուշաքովս, Հայաստանի եւ Ատրպէյճանի հարցերու մնայուն զեկուցողներ Միրիամ Լեքսմըն եւ Տեն Պառնա, հանդէս եկան միացեալ յայտարարութեամբ՝ դատապարտելով Ատրպէյճանի մէջ պահուող հայ գերիներու գործերով 5 Փետրուարին Պաքուի ռազմական դատարանի տուած վճիռը՝ զգուշացնելով, որ այդ մէկը կրնայ վնասել

Հարաւային Կովկասի մէջ ձեւաւորուող փխրուն, բայց դրական խաղաղութեան մթնոլորտին: Պրիւքսելի մէջ «Արմէնփրես»-ի թղթակիցին համաձայն՝ պատգամաւորները խոր ափսոսանքով արձագանգեցին Պաքուի դատարանին մէջ տրուած վճիռներուն՝ ընդգծելով, որ անոնք կը ներառեն նաեւ ցմախ բանտարկութեան հինգ դատավճիռներ: Յայտարարութիւնը կը շեշտէ, որ դատական այս զարգացումները տեղի կ'ունենան զգայուն փուլի մը, երբ Հայաստան-Ատրպէյճան յարաբերութիւններուն մէջ նկատուած են խաղաղութեան եւ վստահութեան ազդակներ:

Հայ դատը Օզի հակահայ յայտարարութեան նիւթերը կը պահանջէ կառավարութենէն


Արեւմտեան Ամերիկայի Հայ դատի Այանձնախումբը դիմեց Միացեալ Նահանգներու առողջապահութեան սպասարկութիւններ նախարարութեան եւ «Մետիքեր»-ի ու «Մետիքէյտ»-ի սպասարկութիւններու կեդրոններուն (CMS), պահանջելով CMS-ի վարիչ տղոքը. Մեհմետ Օզի կողմէ 3ուսիս 27-ին եւ 28-ին կատարուած հակահայ յայտարարութիւններուն տեսանիւթերը եւ այն փաստերը, եթէ կան, որոնք հայերը ամբաստանելու հիմք հանդիսացած էին:

Նշենք, որ առանց փաստեր հրապարակելու, Օզ նաեւ հայերու պատկանող ձեռնարկութիւններ ամբաստանած էր մինչեւ 3,5 միլիոն տոլարի գեղծարարութիւններ իրականացնելու յանցանքով: Հայ դատը օրին դատապարտած էր Օզի հայատեաց յայտարարութիւնները, որոնց մէջ ան առողջապահական սպասարկութիւններու ոլորտի ենթադրեալ գեղծարարութիւնները կապած էր «ռուսահայ հրոսակախումբեր»-ու, ինչպէս նաեւ հայ ինքնութիւնը ներկայացուցած էր իբրեւ յանցագործութեան ցուցանիշ: Հայ դատը նաեւ քաղաքացիական իրաւանց ոտնակոխումի բողոք ներկայացուց թրքածին պաշտօնատարին դէմ: Գալիֆորնիոյ նահանգապետ Կելըն Նիւսըմ եւս քաղաքացիական իրաւանց ոտնակոխումի բողոք ներկայացուց Օզի դէմ, իսկ Եւրոպական Եւրոմի ԾիՖ հետաքննութիւն պահանջեց այս գծով:

QUESTION: Exactly who at CMS and/or HHS reviewed, approved, and cleared for posting the Dr. Oz video on official US government social media? ANCA.ORG

Եպիսկոպոսաց ժողովը պիտի կայանայ նախապէս ճշդուած վայրին մէջ

«Սփիւթնից Արմէնիա»-ին հետ ունեցած զրոյցին ընթացքին այս հաստատումը կատարեց Մայր Աթոռի տեղեկատուական համակարգի տնօրէն Եսայի քահանայ Արթնեան յայտեց, թէ Եպիսկոպոսաց ժողովը պիտի կայանայ: «Անցկացման վայրն անփոփոխ է», շեշտեց ան: Նշենք, որ 16-19 Փետրուարին Աստրիոյ Սենթ Փոլըն քաղաքին մէջ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ.ի հրաւերով տեղի պիտի ունենայ Եպիսկոպոսաց ժողովը:



29 Յունուարին Քննչական կոմիտէն յայտնեց, որ Հայոց Առաքելական եկեղեցւոյ դէմ քրեական վարոյթ նախաձեռնուած է Մասյացոտնի թեմի նախկին առաջնորդ, կարգալոյծ հոշակուած Գեորգ եպս. Սարոյեանի (Արման Սարոյեանի) «գործով» (դատական վճիռը չկատարել): 31 Յունուարին այս գործի ծիրին մէջ 6 եպիսկոպոսները հարցաքննուեցան, եւ անոնց նկատմամբ խափանման միջոց ընտրուեցաւ բացակայելու արգելքը:

Գաղութային

Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.-ի գործունեությունը 2026-ի Յունուարին

Գործունեությամբ եւ անանդությամբ լեցուն ամիս մը

Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.-ի ընտանիքին համար 2026-ի առաջին ամիսը սկսաւ եռանդուն գործունեությամբ, որուն թափը տուին միութեան սկաւտներն ու մարզիկները: Եշեցինք հայկական Սուրբ Ծնունդը՝ սկաւտներու, մարզիկներու եւ անդամներու մասնակցությամբ, Աւետիսի անանդական շրջագայութեամբ: Ֆիքսի Ս. Կարապետ եկեղեցւոյ տօնախմբութեան առիթով, շրջանի Հ.Մ.Ը.Մ.-ի մասնաճիւղի սկաւտները ներկայ գտնուեցան Ս. պատարագին: Յաջողությամբ տեղի ունեցան ամանորեան գաթայի հաւաքոյթները Աթէնքի, Գոքինիոյ եւ Գարէայի սկաւտական խումբերուն կողմէ, ինչպէս նաեւ Աթէնքի եւ Գոքինիոյ մասնաճիւղերուն կողմէ՝ շրջաններու ակումբներուն մէջ, համախմբելով մեր գաղութի հայրենակիցները եւ Հ.Մ.Ը.Մ.-ի համակիրները: Հ.Մ.Ը.Մ.-ի Թեսաղոնիկէի մասնաճիւղը կազմակերպեց բացառիկ տօնական ելոյթ մը՝ Նուիրուած հայ մշակութային ժառանգութեան, որուն յաջորդեց ամանորի կարկանդակի հատումը: Շրջանային վարչութիւնը կազմակերպեց ամանորեան գաթայի եզրափակիչ հաւաքը, մասնակցութեամբ մասնաճիւղերու վարչութիւններուն, սկաւտական խորհուրդներու եւ անոնց մասնաճիւղերու խմբապետներուն:



Մարզական գործունեությունը դաշտերուն վրայ

Միութեան մարզական բաժանմունքները շարունակեցին իրենց մրցումները յունական ֆետերասիոններու մրցաշարքերուն, մասնակցելով 32 վոլէյպոլի, կողովակնակի եւ ճատրակի մրցումներու, ինչպէս նաեւ լողարշաւի մրցաշարքին: Նոյն շրջանին, մեր մարզական խումբերուն փորձերը 130-Է ակելի եղան, ստեղծելով խանդավառ մթնոլորտ մը մարզադաշտերուն վրայ:

Գործունեությունն բնութեան մէջ

Սկաւտական կեանքը եւս յատկանշուեցաւ իրեն յատուկ ծրագիրներու կազմակերպութեամբ: Տեղի ունեցան գայիկներու եւ արծուիկներու, նաեւ երէցներու եւ պարմանուհիներու ճմեռնային երկօրեայ առաջին արշաւները, իսկ արիներու եւ արեւուշներու ճմեռնային հինգօրեայ առաջին բանակումը իրականացաւ Քարտիցայի սկաւտական ակումբին մէջ: Այս սկաւտական համախմբումները առիթ դարձան մեր մասնակցող պատանիներուն եւ երիտասարդներուն համար ամրապնդելու եղբայրական ոգին, միաժամանակ զգալու եւ ընտելանալու բնութեան միջավայրին ու սկաւտական մթնոլորտին անստառի կեանքին մէջ: Վերանորոգուած խանդավառությամբ կը շարունակենք մեր գործունեությունը, միշտ ձգտելով ստեղծագործ Փետրուարի մը, Հ.Մ.Ը.Մ.-ական նշանաբանի ու ոգիի առաջնորդութեամբ:

ԹՂԹԱԿԻՑ



Նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան հօր՝ Ս. պատարագ Թեսաղոնիկէի մէջ

Կիրակի, 8 Փետրուար 2026-ին, առաւօտեան ժամը 10:30-ին, Թեսաղոնիկէի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, մատուցուեցաւ Ս. պատարագ, նախագահութեամբ Յունաստանի Հայոց թեմի բարեջան Առաջնորդ գերբշ. Տ. Սահակ Ս. եպս. Եմիլեանի: Ս. Պատարագը մատուցեց շրջանիս հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Եղիա վրդ. Մախասեան: Սրբազան հայրը ժողովուրդին ուղղեց հայրական պատգամին համար բնաբան ընտրած Էր Յակոբոս Առաքեալի գիրքին հետեւեալ տողը, «Գիտցած էղէք, որ փորձութիւնը համբերութիւն կը ծնի» (Յկ. 1.3): Առաքեալին տոյն հաստատումով, Սրբազան հայրը պատգամին ընդմէջէն ժողովուրդին դիտել տուաւ, թէ այսօրուան մեր բոլոր դժուարութիւնները, նեղութիւնները եւ կամ ձախողութիւնները կը պատահին ոչ թէ մեզ տկարացնելու, այլ բարձրացնելու եւ զօրացնելու համար: Սրբազանը շեշտեց, թէ Աստուծոյ խօսքը միայն «խօսք»-ի սահմաններուն մէջ չէ, որ կ'ամփոփուի, այլ նաեւ կեանք կ'անէ իւրաքանչիւր բարեպաշտի կեանքին մէջ: Ուստի, Սրբազան հայրը իր յորդորներով ու խրատներով քաջալեր հանդիսացաւ ներկայ հաւատացեալ ժողովուրդին ու անոնց Քրիստոսի խօսքերով ցոյց տուաւ, թէ ինչպէ՛ս կարելի է տոկալ կեանքի փորձորիկներուն, միաժամանակ հաւատարիմ մնալով Յիսուս Քրիստոսի խօսքերուն:

Ս. Պատարագի աւարտին, հոգեհանգստեան պաշօն կատարուեցաւ Մակեդոնիոյ եւ Թրակիոյ Հ.Գ.Խ.-ի բարերարներուն, ուսուցչուհիներուն եւ Նուիրեալ անդամ-անդամուհիներուն հոգիներուն համար, նախագահութեամբ Սրբազան հօր: Հոգեհանգիստը կը կատարուի ամէն տարի Հ.Գ.Խ.-ի կազմակերպութեամբ, ի յիշատակ բոլոր այն անձներ հոգիներուն, որոնք իրենց ողջ կեանքի ընթացքին միշտ նեցուկ կանգնած են մեր ժողովուրդին՝ թէ՛ բարերարական գործերով, թէ՛ ուսուցչական ասպարեզին ընդմէջէն հայեցի դաստիարակութիւն ջամբելով, եւ որպէս անդամ ու անդամուհի՝ անձները ծառայութեամբ իրագործելով իրենց սիրտի պարտքը: Աւարտին, «Տէր-Չաքարեան» սրահին մէջ, կազմակերպութեամբ «ԱՆԻ» մասնաճիւղին, տեղի ունեցաւ կոկիկ հիւրասիրութիւն եւ տարեկան գաթայի հատում: Բարի գալուստի խօսքով Առաջնորդ Սրբազան հօր եւ ներկայ ժողովուրդին ողջունեց «ԱՆԻ» մասնաճիւղի ատենապետուհի Մարիամ Յարութիւնեան-Տէրէյեան, որ խորին շնորհակալութիւն յայտնեց բոլորին՝ իրենց մնայուն ներկայութեան եւ անսակարկ Նուիրումին համար, ընդգծելով այն սիրտի գոհունակութիւնը, որ մշտապէս կը ստեղծուի, մասնաճիւղին նկատմամբ ցուցաբերուած անշահախնդիր աջակցութիւնը տեսնելով:

Այնուհետեւ իրաւորուեցաւ Սրբազան հայրը փոխանցելու իր հայրական խօսքն ու օրհնութիւնը: Սրբազանը երախտագիտութեամբ յիշատակեց բոլոր այն անձերը, որոնք երբեք ճիշտ չեն խնայած Հ.Գ.Խ.-ի միութեանական կեանքին ընդմէջէն իրենց Նուիրեալ ծառայութիւնը մատուցելու մեր գաղութներուն մէջ: Միաժամանակ, ան դիմեց Նոր սերունդին՝ շեշտելով, որ Նոյն ջերմեանդութեամբ ու պատասխանատուութեան զգացումով պէտք է շարունակուի մեր նախնիներու սկսած ծառայութիւնը, որպէսզի անոնց ստեղծած ու պահպանած սովորութիւններն ու անանդութիւնները մշտապէս կենդանի պահեն յիշատակը: Ապա, Սրբազան հայրը գնահատեց մասնաճիւղի այժմու անդամուհիները, որոնք իրենց ժամանակն ու կարողութիւնները անշահախնդիր կը Նուիրեն մեր ժողովուրդին ծառայելու գործին: Իր խօսքէն ետք, Սրբազանը կատարեց գաթայի օրհնութիւնը եւ իր հայրական օրհնութիւնը փոխանցեց բոլոր ներկաներուն:

ԹՂԹԱԿԻՑ

Կես լուրջ - կես կատակ

«Ուսումի հետեւանքները...»

ՄԻՆՍԱՐ

Մկոն ու Աբոն քով - քովի նստած, գլուխին ծրած, երեսին կախած, Առանց «իշտախ»ի սուրճ կը խմէին, Իրենց «չար բախտը» կը հայհոյէին, Ու հազիւ լսուող խժալուր ձայնով, Կը խօսակցէին սիկար ծխելով: Ծուխը քաշելով նախ կուլ կու տային, Յետոյ ալ ուժով դուրս կը փչէին, Ու քիթին տակէն կը մոմաշին, «Նահալլէթ» ըլլար, ծօ, ասանկ կեանքին»:

Մկոն խօսեցաւ՝ «ա՛խ» մը գաշելով, Հոգիին «տէրտ»ը պարպել ուզելով՝ «Այսինքն Աբօ ինչո՞ւ չի կրնանք, «Մենք ալ յարգալից երկու անձ ըլլանք, «Համբաւի, պատուի, վարկի արժանի, «Եւ ոչ թէ ասանկ՝ անառակ, լկտի, «Որոնց հազիւ թէ ճամբանուն տեսնեն, «Մարդիկ ուղղակի ճամբայ կը փոխեն, «Մենք ի՞նչ ենք «օրդախ», մենք հոգի չունի՞նք, «Մենք ալ ապրելու իրաւունք չունի՞նք, «Մեզի ալ մայր մը աշխարհ չէ՞ բերած, «Չորքոտանի՞՞ ենք, մենք մարդ չե՞նք ծնած, «Միթէ աղտո՞տ ենք, վրանիս հոտա՞ծ, «Ծակած հագուստներ ու կօշիկ՞ հագած, «Մենք ալ Աստուծոյ գաւակները չե՞նք, «Մենք հոգի չունի՞նք, պարապ տակա՞ն ենք: «Ես ալ կ'ուզեմ կոր ընտանիք կազմել, «Միս մարդոց նման կնիկ մը առնել, «Տունի տէր դառնալ, գործ մը ունենալ, «Չորուզ - չօճուզ»ի ես ալ հայր ըլլալ, «Այսինքն ինչո՞ւ մենք ալ չի կրնանք, «Պատուի արժանի երկու անձ ըլլանք, «Ծիշդ ա՛ս Է, Աբօ, հոգիս տանջողը, «Պիշեր ու ցերեկ անքուն ձգողը», Ըսաւ ու նորէն խոր «ա՛խ» մը քաշեց, Տուփը հանելով նոր սիկար վարեց: Այս անգամ Աբոն խօսք առնողն էր, Ինքն ալ իր կարգին ըսելիք ուներ, Որպէս իրատես ու ճիշդ մտածող, Ուզեց ընկերին քանի մը խօսքով, Մանաւանդ առանց սիրտը կոտրելու, Բան հասկցնել, առանց նեղելու՝ «Ա՛խ իմ երազկոտ, ընկերս բարի, «Բան մը պիտո՞ ըսեմ, սիրտդ չի նեղուի, «Մեզի աղջիկը, ո՞վ կու տայ ընկեր, «Լաւ - լաւ մեր փորը դեռ չէ կշտացեր, «Ուր մնաց որ մենք կնիկ ալ առնենք, «Կարծես «տէրտ» չ'ունինք, կի՞ն ալ կերցնենք, «Խելքդ գլուխդ հաւաքէ, ընկեր, «Ինքզինքիդ եկուր, խենթ բաներ մը ըսեր, «Օղէն վար իջիր ու հողին կոխէ, «Ըսածդ չ'ըսած նախ լաւ մտածէ, «Մենք քանի ասանկ թշուառ ենք ընկեր, «Դուն նման բաներ հե՛ջ մի երագեր, «Պէտք է ընդունիս, որ անբախտ ծնանք, «Ասանկ եկեր ենք, ասանկ ալ կ'երթանք, «Եւ այս կացութեամբ կամ պիտո՞ հաշտուիս, «Կամ ալ միշտ ասանկ պիտի տանջուիս: «Որոշումը՝ դուն պիտո՞ առնես, ընկեր, «Կ'ուզես «նէ» լսէ, չես ուզեր մը ընկեր...»:

Մկոն լուր մնաց, հեջ ձայն չհանեց, Լսած խօսքերը, նախ լաւ մտածեց, Յետոյ ալ կարծես՝ նոր բան մտածած, Աբոյին ըսաւ լման համոզուած՝ «Նայիր ընկերս, չարքա՛ջ Չէյթունցի, «Բոլոր խօսածդ լա՛ւ մտածեցի, «Դուն որոշ չափով իրաւունք ունիս, «Բայց խորքին մէջ նոր բան ըսած չունիս, «Ուրեմն խնդրեմ ինծի ամտօնէ, «Հաճիս մընդմիջեր ու մտիկ ըրէ, «Քեզի նոր միտք մը ներկայացնեմ, «Իմ գաղափարս՝ քեզի բացատրեմ, «Ուրեմն՝ իմին կարծիքով, ընկեր, «Մերին խնդիրը՝ ուրիշ է, տարբեր, «Պատճառը մեր այս վիատ կացութեան, «Հետեւանք է գեթ՝ մեր տգիտութեան, «Դպրոց չենք գացած, գիր կարդալ չունինք, «Ուսեալներուն հետ մենք ինչպէ՞ս չափուիք...: «Գալ երկուշաբթի, շատ լուրջ կը խօսիմ, «Դպրոց պիտո՞ երթամ արձանագրուիմ, «Ու դուն ա՛յն ատեն պիտո՞ տեսնես, ընկեր,



«Ինծի կին կու տան, կամ չեն տար եղեր»:

Մկոն, իր տուած խօսքին տէր մնաց, Նախակրթարան սկիզբը գնաց, Երկրորդականն ալ երբ ասարտեց, Կնիկ մը առաւ ընտանիք կազմեց, Սակայն կարդալէն երբեք «վազ» չանցաւ, Ու համալսարան երթալ սկսաւ, Եւ թէեւ դարձաւ ընտանիքի տէր, Իր կրթութիւնը կը շարունակէր:

Հիմա սրճարան նստած իր պահուն, Աբոյին կ'ըսէ խօսքեր իմաստուն... «Ուսումը կեանք է, սիրելի ընկեր, «Մտածել կու տայ նոր գաղափարներ, «Մեր առջեւը լայն ճամբայ կը բանայ, «Ողջամիտ բաներ մտածել կու տայ: «Խօսք մը պիտո՞ ըսեմ, խնդրեմ լաւ լսէ, «Ու օղի նման ականջիդ կախէ, «Այս երկրին վրայ առանց ուսումի, «Մարդ կոչեցեալդ արժէք մը չունի: «Հարցում մը հիմա ամտօնէ ընեմ, «Որ մէկ աւելի քեզի համոզեմ, «Ու նայիմ միտքս ըմբռնել կրցա՞ր, «Իմ խօսածներես բան մը հասկցա՞ր՝ «Կրախամ Պէլը ո՞վ էր, ըսէ հաճիս, «Իր ո՞վ ըլլալէն գաղափար ունի՞ս»: Աբոն գլխիկոր ու խայտառակուած, Ամօթէն լման կաս - կարմիր կտրած, Խօսեցաւ հազիւ լսելի ձայնով՝ «Ես սաւոր մասին ուրկէ՞ գիտնամ որ, «Ո՞վ էր սա մարդը, ո՞րտեղ կը մնար, «Չէ նէ մը մեզի թաղեցի՞ կ'ըլլար, «Ծիշդ իր մասին երբեք չեմ լսած, «Ինծի ծանօթ չէ, անունդ տուած»: Մկոն գլուխը վեր ու վար շարժեց, Ծիշդ աչքերուն մէջ Աբոյին հայեց, Ապա ժպիտ մը հագած իր դէմքին, Այսպէս խօսեցաւ իր բարեկամին՝ «Կրախամ Պէլը, իմ մանկունակ ընկեր, «Պարզ հեռաձայնը, ինք՝ նէ հնարեր, «Եթէ ինծի պէս ուսում ստանայիր, «Վստահ եմ իրեն լա՛ւ պիտո՞ ճանչնայիր»:

Աբոն՝ սրդողած, Մկոյին լսեց, Բայց ըսածներուն ականջ չկախեց, Ծիշդը, կարծես թէ՛ անդամն ձեռով, Իրենց թաղին մէջ, աչ ու ձախ լսուող, Խօսքեր մը ուզեց յայտնել ընկերին, Խօսքեր հիմնաւոր եւ կամ ալ անհիմ, Չուտ բանբասանքներ, սրճարան խօսուած, Որ ինքը երբեք չէր հաւատացած: Հակառակ ասոր ինքզինքը զսպեց, Ընկերին սիրտը ցաւցնել չ'ուզեց: Դարձեալ խօսեցաւ Մկոն ջերմօրէն՝ «Քեզի հարցում մը պիտո՞ ընեմ նորէն, «Տարվին անունը բնաւ լսե՞ր ես, «Իր մասին երբեք դուն բան մը գիտե՞ս, «Իր ո՞վ ըլլալէն, հեջ «խաբար» ունի՞ս, «Կամ իրեն մասին գաղափար չունիս...»: Աբոն ականածի, չափազանց նեղուած, Ամօթէն կրկին կաս - կարմիր կտրած, Խօսեցաւ հազիւ լսելի ձայնով, Պատասխանելու մեծ ճիգ թափելով՝ «Ես Տարվին - Մարվին, ուրկէ՞ պիտո՞ գիտնամ, «Ինծի իր մասին բան մը ըսէ «աղա»մ, «Մեզի ծանօթ է, միթէ դրացի՞, «Իր տունը ո՞ւր է, ո՞ւր կը բնակի»: Մկոն աչ ու ձախ գլուխը շարժեց, Արհամարհութեամբ Աբոյին դիտեց, Ու լայն ժպիտ մը հագած իր դէմքին, Ասանկ բացատրեց իր բարեկամին՝ «Տարվինը, գիտցիր սիրելի ընկեր, «Հին տարիներուն այն գիտունն էր, «Որ ելաւ բոլոր աշխարհին պոռաց, «Թէ՛ «Մարդ, կապիկէն Է յառաջ եկած», «Եթէ ինծի պէս ուսում ստանայիր, «Վստահ եմ իրեն լա՛ւ պիտո՞ ճանչնայիր»: Այս անգամ Աբոն, ալ չդիմացաւ, Բերանը բացաւ, խօսիլ սկսաւ՝ «Սիրելի Մկօ արտօնէ խնդրեմ, «Որ ես ալ քեզի հարցում մը ընեմ, «Դուն, որ ուսեալ ես, ու շա՛տ բան գիտես, «*Արշամ անունը, միթէ լսե՞ր ես»: Մկոն գլուխը որքան ալ ճզմեց, Ասանկ մտածեց, անանկ մտածեց, Բայց պատասխան մը գտնել չկրցաւ, Անանկ որ դարձաւ ընկերին ըսաւ՝ «Ոչ, դժբախտաբար իրեն չեմ գիտեր, «Հաճիս, դո՛ւն ինծի բացատրէ ընկեր»: Այս անգամ Աբոն գլուխը շարժեց, Յաղթականօրէն Մկոյին դիտեց, Ու լայն ժպիտ մը հագած իր դէմքին, Ասանկ բացատրեց իր բարեկամին՝ «Արշամը, ան է, սիրելի ընկեր, «Որ որքան որ դուն ետեւ՝ նես ինկեր, «Միայն ու միայն քու զարգացումիդ, «Կը «մխիթարէ» ճատը կնիկիդ...»:

minsar55gmail.com

ՕՏԱՐ ԲԱՆԵՐ
 Իշտախ = Ախորժակ
 Նահալլէդ = Անիծեալ,
 Տէրտ = Ցաւ, վիշտ, կսկիծ
 Օրդախ = Ընկեր, բարեկամ
 Չօլուզ - չօճուզ = Փոքր տղայ, երեխայ, մանուկ,
 մանկիկ
 Նէ = Եթէ
 Խաբար = Լուր, տեղեկութիւն
 Աղա = Պիղատեր, կալուածատեր

* Արշամ = Այր մարդու անուն, (արջի ոյժ ունեցող)



Հրապարակի վրայ Է «Ազատ Օր»-ի 2026-ի պատի օրացոյցը

Օրացոյցը կարելի է ստանալ «Ազատ Օր»-ի ցրուիչներէն, խմբագրատունէն, Ազգային Առաջնորդարանէն եւ շրջաններու ակումբներէն:

Գին՝ 20 եւրօ:

Άρθρο - Γνώμες

Μυστικό έγγραφο του 1920 αποκαλύπτει τα σχέδια της Τουρκίας -όπως ακριβώς και σήμερα- για την εξάλειψη της Αρμενίας

Του Χαρούτ Σασουιάν
www.TheCaliforniaCourier.com

Τους τελευταίους μήνες έχουν γίνει επανειλημμένες αναφορές σε ένα ιδιαίτερα σημαντικό βιβλίο στα αρμενικά, που εκδόθηκε στο Γερεβάν το 2019 από τον τουρκολόγο Δρ. Ρούμπεν Σαφρασιάν. Ο τίτλος του βιβλίου είναι: «Μουσταφά Κεμάλ: Ο Αγώνας κατά της Δημοκρατίας της Αρμενίας, 1919-1921».

Ο λόγος που το βιβλίο αυτό έχει προσελκύσει αυξημένο ενδιαφέρον τη συγκεκριμένη περίοδο είναι ότι, μεταξύ άλλων πολύτιμων στοιχείων, παρουσιάζει το πλήρες κείμενο ενός απόρρητου κρυπτογραφημένου τηλεγραφήματος. Το τηλεγράφημα αυτό στάλθηκε στις 8 Νοεμβρίου 1920 από τον Αχμέτ Μουχτάρ, προσωρινό Υπουργό Εξωτερικών της Τουρκίας, προς τον Καζίμ Καραμπεκίρ, Αρχιστράτηγο του Στρατού του Ανατολικού Μετώπου, δηλαδή στα σύνορα με την Αρμενία. Το συγκεκριμένο έγγραφο είχε δημοσιευθεί για πρώτη φορά το 1960 στην Κωνσταντινούπολη από τον ίδιο τον Καραμπεκίρ στο βιβλίο του «Ο Πόλεμος της Ανεξαρτησίας μας». Σύμφωνα με τον Δρ. Σαφρασιάν, το έγγραφο αυτό αντικατοπτρίζει με σαφήνεια τη θέση του Προέδρου της Τουρκίας Μουσταφά Κεμάλ (Ατατούρκ) και δεν θα μπορούσε να είχε συνταχθεί χωρίς τη ρητή καθοδήγηση και έγκρισή του. Ο ίδιος ο Μουχτάρ υπογράμμιζε ότι «η μυστική αυτή εντολή περιέχει τον πραγματικό στόχο της [τουρκικής] κυβέρνησης».

Επιπλέον, ο Κεμάλ είχε αποστείλει ήδη από τις 5 Φεβρουαρίου 1920 κρυπτογραφημένο τηλεγράφημα στον Καραμπεκίρ, δίνοντάς του σαφείς οδηγίες να προετοιμαστεί για επίθεση κατά της Αρμενίας. Η ιδιαίτερη αξία αυτού του ιστορικού εγγράφου έγκειται στο γεγονός ότι η εχθρική στάση της τουρκικής κυβέρνησης το 1920 παρουσιάζει εντυπωσιακές και ανησυχητικές ομοιότητες με τη σημερινή πολιτική της απέναντι στη Δημοκρατία της Αρμενίας. Οι παραλληλισμοί ανάμεσα στον τρόπο με τον οποίο η Τουρκία αντιμετώπιζε την Αρμενία στο παρελθόν και στον τρόπο που τη βλέπει σήμερα είναι συγκλονιστικοί. Μια τέτοια συγκριτική προσέγγιση βοηθά επίσης στην κατανόηση της νοοτροπίας της πολιτικής ηγεσίας του Αζερμπαϊτζάν, το οποίο λειτουργεί ως «νεότερος εταίρος» της Τουρκίας. Το μυστικό αυτό έγγραφο αποκτά άμεση επικαιρότητα σε σχέση με τις επίμονες προσπάθειες του Πρωθυπουργού Νικόλ Πασινιάν να υπογράψει μια «Συνθήκη Ειρήνης» με τον Πρόεδρο Ιλχάμ Αλίεφ, πιστεύοντας αφελώς ότι ένα τέτοιο έγγραφο θα μπορούσε να αποτρέψει το Αζερμπαϊτζάν από το να επιτεθεί στην Αρμενία.



Οι ομοιότητες ανάμεσα σε όσα γράφτηκαν το 1920 και σε όσα συμβαίνουν σήμερα είναι ανατριχιαστικές. Παρακάτω επισημαίνονται αποσπάσματα του μυστικού τουρκικού εγγράφου του 1920, τα οποία είναι εξίσου δυσόιωνα και επίκαιρα και σήμερα:

«Δεν υπάρχει καμία αμφιβολία ότι η πρόταση κατάπαυσης του πυρός που υποβλήθηκε από την Αρμενία, τη στιγμή που αυτή είναι απομονωμένη τόσο από τον Δυτικό όσο και από τον Ανατολικό κόσμο, αποσκοπεί στην αποφυγή μιας επικείμενης καταστροφής. Μόλις η Αρμενία ενισχυθεί, θα επιδιώξει φυσικά να εκπληρώσει την υποχρέωση που της επιβάλλει η Συνθήκη των Σεβρών να διακόψει τους δεσμούς μας με την Ανατολή και, σε συνεργασία με τους Έλληνες, να υπονομεύσει τη ζωή και την πρόοδό μας. Είναι αδιανόητο η Αρμενία, η οποία βρίσκεται στο κέντρο της μεγάλης μουσουλμανικής περιφέρειας, να απαρνηθεί με ειλικρινή πεποίθηση αυτό το σκληρό καθήκον χωροφύλακα και να αποφασίσει να συνδέσει πλήρως τη μοίρα της με την Τουρκία και τον Ισλαμισμό. Για τον λόγο αυτό, είναι απολύτως αναγκαίο η Αρμενία να εξαιρεθεί πολιτικά και φυσικά από το μέσον. Ταυτόχρονα, δεδομένου ότι η επίτευξη αυτού του στόχου εξαρτάται από τις δυνατότητες που μας παρέχει η ισχύς μας και από τη γενικότερη πολιτική συγκυρία, είναι απαραίτητο να προετοιμαστούν συντονισμένα οι αναγκαίες προϋποθέσεις. Από αυτό προκύπτει ότι η αποχώρησή μας στο πλαίσιο μιας απλής συμφωνίας κατάπαυσης του πυρός με τους Αρμένιους δεν μπορεί να τεθεί καν ως θέμα συζήτησης. Οι βασικοί όροι της κατάπαυσης του πυρός που θα μεταφερθούν στους Αρμένιους δεν θα

πρέπει να αποσκοπούν στην αποχώρησή μας από την Αρμενία, αλλά στην παραπάνησή τους και στη δημιουργία μιας εικόνας φιλειρηνικής στάσης προς την Ευρώπη. Στην πραγματικότητα, όμως, το επιδιωκόμενο αποτέλεσμα θα πρέπει να είναι η δημιουργία των απαραίτητων προϋποθέσεων για τη σταδιακή προετοιμασία και ωρίμανση του τελικού μας στόχου.»

«Στην παρούσα φάση, είναι απολύτως απαραίτητο να αποστρατευτεί ο αρμενικός στρατός και να κατασχεθεί ο οπλισμός του, ώστε να μην υπάρχει καμία δυνατότητα ανασυγκρότησης της στρατιωτικής του δομής. Υπό το πρόσημο της διατήρησης του ελέγχου των σιδηροδρόμων και της προστασίας των δικαιωμάτων του μουσουλμανικού πληθυσμού, είναι αναγκαίο να εγκαθιδρύσουμε τον στρατιωτικό μας έλεγχο σε ολόκληρη την επικράτεια της Αρμενίας και, με τον τρόπο αυτό, να κρατήσουμε στα χέρια μας όλους τους οδικούς άξονες που συνδέουν την Τουρκία με το Αζερμπαϊτζάν. Ο προαναφερθείς στόχος πρέπει να επιτευχθεί με συγκαλυμμένο και ήπιον τρόπο, τόσο στο κείμενο της συνθήκης ειρήνης όσο και στις ενέργειες που απορρέουν από αυτήν, υπό την προϋπόθεση ότι θα εμφανιζόμαστε διαρκώς ειρηνικοί στα μάτια των Αρμενίων.»

«Η αποδοχή της αρχής του δημοψηφίσματος σχετικά με τα σύνορα, ως πρώτο σημείο των όρων της κατάπαυσης του πυρός που σας αποστέλλονται σήμερα για να παραδοθούν στην αρμενική κυβέρνηση, απορρέει από την επιθυμία να παρεμποδιστεί ο οριστικός καθορισμός των συνόρων με την Αρμενία. Μπορείτε να αποδεχθείτε προσωρινά τη συνοριακή γραμμή του Μπρεστ-Λιτόφσκ, δεδο-

μένου ότι ο στόχος είναι αρχικά να αποσπαστεί από τους Αρμένιους μια γραπτή πρόταση σχετικά με τα σύνορα και να αποφευχθεί το ενδεχόμενο αδιεξόδου στις διαπραγματεύσεις. Παράλληλα, είναι αναγκαίο να προετοιμαστεί το έδαφος για συνεχή παρέμβαση, υπό το πρόσχημα της προστασίας των δικαιωμάτων της μουσουλμανικής μειονότητας που παραμένει στην άλλη πλευρά των συνόρων [εντός της Αρμενίας]. Πρέπει να περιληφθούν στη συμφωνία ρήτρες που θα διασφαλίζουν την κατάσχεση των όπλων του εχθρού [της Αρμενίας] και τον ταχύτερο δυνατό αφοπλισμό του στρατού της. Ιδιαίτερη έμφαση πρέπει να δοθεί στον σταδιακό εξοπλισμό των Τούρκων της περιοχής και στη δημιουργία εθνικών ενόπλων δυνάμεων. Οι δυνάμεις αυτές θα συνδέσουν την Ανατολή με τη Δύση και θα καταστήσουν το Αζερμπαϊτζάν ανεξάρτητο τουρκικό κράτος.»

Υπάρχουν αρκετές ανησυχητικές ομοιότητες ανάμεσα στις εχθρικές προθέσεις που εκφράζονται στο τουρκικό έγγραφο του 1920 και στη σημερινή πραγματικότητα:

1. Η «Συνθήκη Ειρήνης» που προτίθεται να υπογράψει η Αρμενία με το Αζερμπαϊτζάν δεν πρόκειται να αποτρέψει τον Πρόεδρο Αλίεφ από την υλοποίηση της επανειλημμένα διακηρυγμένης πρόθεσής του να εισβάλει και να καταλάβει ολόκληρη τη Δημοκρατία της Αρμενίας, την οποία αποκαλεί «Δυτικό Αζερμπαϊτζάν». Η πλέον ξεκάθαρη ένδειξη της κακόβουλης πρόθεσής του είναι οι συνεχείς απειλές του και οι αδιάκοπες απαιτήσεις για νέες παραχωρήσεις.

Όσο περισσότερο ο Πρωθυπουργός Νικόλ Πασινιάν ανταποκρίνεται στις απαιτήσεις αυτές, τόσο αυξάνονται οι αξιώσεις του Αλίεφ.

2. Αν ο Πασινιάν αποδεχθεί την απαίτηση του Αλίεφ για την επανεγκατάσταση 300.000 Αζέρων στην Αρμενία, αυτό ενδέχεται να σημάνει το τέλος της αρμενικής κρατικής υπόστασης. Ο Αλίεφ θα μπορούσε να αξιοποιήσει ακόμη και το παραμικρό πρόσχημα για να αποστείλει στρατεύματα στην Αρμενία, υποτίθεται για την «προστασία» των ομοεθνών του.

3. Η αναφορά στο έγγραφο του 1920 ότι πρέπει να «κρατάμε στα χέρια μας όλους τους δρόμους που συνδέουν την Τουρκία με το Αζερμπαϊτζάν» παρουσιάζει άμεση ομοιότητα με τη σημερινή απαίτηση για τη δημιουργία ενός «διαδρόμου». Η απαίτηση αυτή αντανακλά τη διαχρονική τουρκική φιλοδοξία για έναν «Δρόμο του Τουράν», ο οποίος θα συνδέει τις τουρκικές δημοκρατίες της Κεντρικής Ασίας με την Τουρκία.

Εγκαίνια του σχολείου «Λόγος Ελληνικός του Γερεβάν» στην Αρμενία



Τα επίσημα εγκαίνια του σχολείου «Λόγος Ελληνικός του Γερεβάν», το οποίο πλέον έχει αναγνωριστεί από το υπουργείο Παιδείας, Θρησκευμάτων και Αθλητισμού της Ελλάδας ως μέλος του παγκόσμιου δικτύου των Τμημάτων Ελληνικής Γλώσσας (ΤΕΓ), πραγματοποιήθηκαν την Παρασκευή 30 Ιανουαρίου.

Υπό την αιγίδα της Πρεσβείας της Ελλάδας και με τη στήριξη της κοινότητας «Πόντιοι Γερεβάν», το σχολείο καθίσταται βασικό σημείο αναφοράς για τη διδασκαλία της ελληνικής γλώσσας, καθώς και του ελληνικού πολιτισμού, της ιστορίας και των ελληνικών αξιών στην αρμενική πρωτεύουσα.

Το σχολείο απευθύνεται όχι μόνο στους ομογενείς και στους Αρμένιους ελληνικής καταγωγής, αλλά και στους Αρμένιους φίλους της Ελλάδας, καθώς και σε όσους επιθυμούν να σπουδάσουν ή να ζήσουν στην Ελλάδα, λειτουργώντας ως επιπλέον δεσμός φιλίας μεταξύ των δύο χωρών.

Ο εορτασμός των Τριών Ιεραρχών και των Ελληνικών Γραμμάτων προσέδωσε ιδιαίτερο συμβολισμό και εορταστικό χαρακτήρα στην εκδήλωση. Στην εκδήλωση συμμετείχαν ο πρέσβης της Ελλάδας Χρήστος Σοφιανόπουλος, ο οποίος απηύθυνε χαιρετισμό, ο πρέσβης της Κύπρου Μιχάλης Μαύρος, η προϊστάμενη του Τμήματος Διεθνούς Συνεργασίας του υπουργείου Παιδείας, Επιστήμης, Πολιτισμού και Αθλητισμού της Αρμενίας, Α. Χοβανσιάν, ο προϊστάμενος της Διεύθυνσης Εθνικών Μειονοτήτων και Θρησκευμάτων, Β. Ασγκατριάν, καθώς και πολλά μέλη των ελληνικών κοινοτήτων και φίλοι της Ελλάδας. Διαδικτυακή ευλογία απηύθυνε ο αιδεσιμότατος π. Παναγιώτης Καποδίστριας από την Ελλάδα.

Ειδήσεις - Επικαιρότητα

Πρώτη δημόσια επίδειξη των νέων Ινδικών οπλικών συστημάτων και εγχώριων UAV

Οι Ένοπλες Δυνάμεις της Αρμενίας προχώρησαν για πρώτη φορά στην επίσημη παρουσίαση των νέων αποκτημάτων τους από την Ινδία, σηματοδοτώντας μια σημαντική αναβάθμιση του στρατιωτικού τους οπλοστασίου.

Η επίδειξη, πραγματοποιήθηκε παρουσία του αρχηγού του Επιτελείου Άμυνας των Ενόπλων Δυνάμεων της Ινδίας, στρατηγού Ανίλ Τσάουχαν ο οποίος πραγματοποίησε επίσημη επίσκεψη στην Αρμενία. Η επίδειξη περιελάμβανε προηγμένα συστήματα πυροβολικού, πολλαπλούς εκτοξευτές πυραύλων και συστήματα αεράμυνας, πραγματοποιήθηκε στο πλαίσιο της ενισχυμένης αμυντικής συνεργασίας μεταξύ του Γερεβάν και του Νέου Δελχί.

- Ενίσχυση του πυροβολικού με συστήματα ATAGS και Trajan. Στην πρώτη γραμμή της παρουσίασης βρέθηκαν τα συστήματα πυροβολικού ATAGS (Advanced Towed Artillery Gun System). Πρόκειται για ινδικής σχεδίασης ρυμουλκούμενα πυροβόλα των 155 χλστ., τα οποία διακρίνονται για τη μεγάλη τους εμβέλεια, που υπερβαίνει τα 45 χιλιόμετρα.

Το σύστημα είναι ειδικά σχεδιασμένο για επιχειρήσεις σε απαιτητικά γεωγραφικά ανάγλυφα, προσφέροντας υψηλή ακρίβεια και δυνατότητα ταχείας ανάπτυξης. Παράλληλα, επιδείχθηκε το Trajan, ένα αυτοκινούμενο πυροβόλο 155 χλστ., τοποθετημένο επί φορτηγού.

Το Trajan κατασκευάζεται στην Ινδία κατόπιν αδειάς και εστιάζει στην υψηλή



κινητικότητα, επιτρέποντας την τακτική «shoot-and-scoot» (βολή και άμεση μετακίνηση), αντίστοιχη με τα σύγχρονα τροχοφόρα συστήματα πυροβολικού των κρατών του NATO. MLRS Pinaka και αντιεροπορική άμυνα Akash-1S.

Το ενδιαφέρον συκέντρωσαν επίσης οι πολλαπλοί εκτοξευτές πυραύλων Pinaka (MLRS). Το συγκεκριμένο ινδικό σύστημα προσφέρει δυνατότητα πυρών κορεσμού σε αποστάσεις έως και 75 χιλιόμετρα, αναλόγως τη διαμόρφωση, προσδίδοντας στην Αρμενία ένα κρίσιμο πλεονέκτημα στην κρούση στόχων σε μεγάλο βάθος. Στον τομέα της αεράμυνας, η Αρμενία παρουσίασε το σύστημα μέσου βελγικού Akash-1S.

- Στρατιωτική συνεργασία και Lessons

Learned στα εγχώρια Αρμένικα drones.

Η παρουσίαση δεν περιορίστηκε μόνο στα ινδικά συστήματα.

Στο πλαίσιο της επίσκεψης του Αρχηγού του Επιτελείου Άμυνας της Ινδίας, η αρμενική πλευρά παρουσίασε τα δικής της κατασκευής μη επανδρωμένα αεροσκάφη (UAVs). Πρόκειται για drones αναγνώρισης και επίθεσης, αναδεικνύοντας την προσπάθεια της Αρμενίας να αναπτύξει την εγχώρια αμυντική της βιομηχανία παράλληλα με τις διεθνείς προμήθειες.

Η επίδειξη αυτή υπογραμμίζει τη στρατηγική στροφή της Αρμενίας προς την ινδική αμυντική αγορά, επιδιώκοντας τον εκσυγχρονισμό των δυνάμεών της με τεχνολογίες αιχμής που ανταποκρίνονται στις σύγχρονες προκλήσεις του πεδίου μάχης.



Οι ΗΠΑ σύναψαν συμφωνία για τα πυρηνικά με την Αρμενία

Η Αρμενία και οι Ηνωμένες Πολιτείες συμφώνησαν να ενισχύσουν τη συνεργασία τους στον τομέα της πυρηνικής ενέργειας για ειρηνικούς σκοπούς. Η σχετική δήλωση υπογράφηκε από τον πρωθυπουργό της Αρμενίας, Νικόλ Πασινιάν, και τον αντιπρόεδρο των ΗΠΑ, Τζέι Ντι Βανς, ο οποίος πραγματοποίησε διήμερη επίσκεψη στη χώρα.

Όπως ανέφεραν οι δύο πλευρές, ολοκληρώθηκαν οι διαπραγματεύσεις για τη λεγόμενη Συμφωνία 123, το νομικό πλαίσιο που επιτρέπει στις Ηνωμένες Πολιτείες να αδειοδοτούν τη μεταφορά πυρηνικής τεχνολογίας και εξοπλισμού σε τρίτες χώρες. Σύμφωνα με τον Τζέι Ντι Βανς, η συμφωνία ανοίγει τον δρόμο για αρχικές αμερικανικές εξαγωγές προς την Αρμενία ύψους έως και 5 δισ. δολαρίων. «Η συμφωνία αυτή εγκαινιάζει ένα νέο κεφάλαιο στη διαρκώς ενισχυόμενη ενεργειακή συνεργασία μεταξύ της Αρμενίας και των Ηνωμένων Πολιτειών», δήλωσε ο Νικόλ Πασινιάν κατά τη διάρκεια κοινής συνέντευξης Τύπου με τον Αμερικανό αντιπρόεδρο.

Η Αρμενία, η οποία για δεκαετίες εξαρτιόταν σε μεγάλο βαθμό από τη Ρωσία και το Ιράν για τις ενεργειακές της ανάγκες, εξετάζει πλέον προτάσεις από αμερικανικές, ρωσικές, κινεζικές, γαλλικές και νοτιοκορεατικές εταιρείες για την κατασκευή ενός νέου πυρηνικού αντιδραστήρα. Ο νέος σταθμός θα αντικαταστήσει τον υφιστάμενο, ρωσικής κατασκευής, αντιδραστήρα Μετζαμόρ. Μια τέτοια εξέλιξη θα μπορούσε να αποτελέσει πλήγμα για τη ρωσική επιρροή στον Νότιο Καύκασο, η οποία έχει ήδη περιοριστεί μετά την εισβολή της Μόσχας στην Ουκρανία.



Στις 7 Ιουνίου οι Βουλευτικές εκλογές στην Αρμενία

Ο Πρόεδρος της Αρμενίας, Βαχάιν Χατσατουριάν, υπέγραψε διάταγμα με το οποίο προκηρύσσονται οι επερχόμενες εκλογές για την Εθνοσυνέλευση στις 7 Ιουνίου. Σύμφωνα με την παράγραφο 1 του άρθρου 91 του Συντάγματος, στην οποία παραπέμπει το διάταγμα, οι τακτικές κοινοβουλευτικές εκλογές διεξάγονται όχι νωρίτερα από 60 και όχι αργότερα από 50 ημέρες πριν από τη λήξη της θητείας της Εθνοσυνέλευσης. Παράλληλα, το άρθρο 93 ορίζει ότι τόσο οι τακτικές όσο και οι έκτακτες εκλογές προκηρύσσονται από τον Πρόεδρο της Δημοκρατίας. Επιπλέον, σύμφωνα με την παράγραφο 2 του άρθρου 103 του Εκλογικού Κώδικα, «ο Πρόεδρος της Δημοκρατίας εκδίδει διάταγμα για τον ορισμό των τακτικών εκλογών της Εθνοσυνέλευσης το αργότερο 90 ημέρες πριν από την ημερομηνία των εκλογών».

Ισόβια σε πέντε ηγέτες του Αρτσάχ

Την Πέμπτη 4 Φεβρουαρίου το στρατιωτικό δικαστήριο του Αζερμπαϊτζάν επέβαλε ισόβια κάθειρξη σε πέντε πρώην ηγέτες του Αρτσάχ, ενώ δύο ακόμη καταδικάστηκαν σε ποινές φυλάκισης 20 ετών.

Ισόβια καταδικάστηκαν ο πρώην πρόεδρος του Αρτσάχ Αραϊκ Χαρουτιουσιάν, ο πρώην υπουργός Εξωτερικών Ταβίτ Μπαμπιανιάν, ο πρόεδρος του Κοινοβουλίου Ταβίτ Ισχανιάν, ο πρώην διοικητής των Ενόπλων Δυνάμεων Λεβόν Μνατσακανιάν και ο πρώην αναπληρωτής διοικητής Ταβίτ Μανουκιάν.

Οι πρώην πρόεδροι του Αρτσάχ Αρκάντι Γκουκασιάν και Μπάκο Σαχακιάν καταδικάστηκαν σε 20ετή κάθειρξη, λόγω της ηλικίας τους που είναι άνω των 65 ετών.

Το δικαστήριο επέβαλε επίσης βαριές ποινές σε οκτώ ακόμη Αρμένιους του Αρτσάχ, οι οποίοι συμμετείχαν στις διαδικασίες που χαρακτηρίστηκαν ως προσηματικές.

Οι Μελικσέτ Πασαγιάν και Μαντάτ Μπαμπιανιάν καταδικάστηκαν σε 19 χρόνια φυλάκισης, ο Γκαρίκ Μαρτιροσιάν σε 18, οι Νταβίτ Αλαβερντιάν και Λεβόν Μπαλαγιάν σε 16, ενώ οι Βασίλι Μπεγκκλαριάν, Γκουργκέν Στεπανιάν και Έρικ Γαζαριάν σε 15 χρόνια.

Οι δίκες και οι καταδίκες των πρώην ηγετών του Αρτσάχ προκάλεσαν έντονες αντιδράσεις από οργανώσεις ανθρωπίνων δικαιωμάτων και διεθνείς παρατηρητές.

Ο πρώην υπουργός Επικρατείας του Αρτσάχ, Ρούμπεν Βαρντανιάν, ο οποίος δικαζόταν σε ξεχωριστή υπόθεση, δεν καταδικά-



στηκε την Πέμπτη, αν και ο γενικός εισαγγελέας του Αζερμπαϊτζάν έχει ζητήσει την επιβολή ισόβιας κάθειρξης.

Οι αζερικές αρχές δεν επέτρεψαν την παρουσία ανεξάρτητων μέσων ενημέρωσης ή διεθνών παρατηρητών στις δίκες. Ο Βαρντανιάν είχε καταγγείλει ήδη από πέρυσι, κατά τη διάρκεια απεργίας πείνας, ότι οι διαδικασίες συνοδεύονται από «κατάφωρες παραβιάσεις της δίκαιης δίκες».

Η δικηγόρος Σιρανούς Σαχακιάν, εκπρόσωπος Αρμενίων κρατούμενων στο Ευρωπαϊκό Δικαστήριο Ανθρωπίνων Δικαιωμάτων, δήλωσε ότι η απόφαση του δικαστηρίου απλώς επικύρωσε πολιτικές αποφάσεις που είχαν ήδη ληφθεί από τον πρόεδρο του Αζερμπαϊτζάν.

Συνάντηση του Πρέσβη της Αρμενίας με τον Πρύτανη του Αριστοτελείου Πανεπιστημίου Θεσσαλονίκης

Ο πρέσβης της Δημοκρατίας της Αρμενίας στην Ελλάδα, κ. Τιγκράν Μκρτσιάν, συναντήθηκε με τον Πρύτανη του Αριστοτελείου Πανεπιστημίου Θεσσαλονίκης, καθηγητή κ. Κυριάκο Αναστασιάδη. Κατά τη διάρκεια της συνάντησης, ο κ. Μκρτσιάν εξήρε τη μακρόχρονη, άνω των δύο δεκαετιών, συνεργασία μεταξύ του Αριστοτελείου Πανεπιστημίου και του Κρατικού Πανεπιστημίου του Γερεβάν, συμπεριλαμβανομένης της συνεργασίας στο πλαίσιο του εκπαιδευτικού προγράμματος «Jason». Υπογράμμισε ότι το πρόγραμμα επανεκκίνησε πρόσφατα με ιδιαίτερη επιτυχία και πρότεινε τη διεύρυνση του αντικειμένου του, ώστε να περιλαμβάνει όχι μόνο φοιτητές αλλά και μέλη του ακαδημαϊκού προσωπικού.

Τα δύο μέρη αντάλλαξαν απόψεις σχετικά με τις προοπτικές ανάπτυξης συνεργασίας με επιμέρους σχολές και τμήματα του Πανεπιστημίου.

Ο Πρέσβης παρουσίασε, επίσης, αναλυτικά την εντατικοποίηση της συνεργασίας που έχει καταγραφεί το τελευταίο διάστημα μεταξύ Αρμενίας και Ελλάδας στον τομέα της εκπαίδευσης, καθώς και τις



πρωτοβουλίες και συνεργασίες της Πρεσβείας με άλλα ελληνικά εκπαιδευτικά ιδρύματα. Στη συνάντηση παρέστη και ο Επίτιμος Πρόξενος της Αρμενίας στη Θεσσαλονίκη, κ. Άκης Δαγκαζιάν.

Հոգեհանգիստ

Մելքոնեան ընտանիք կը ծառուցանէ, թէ Կիրակի, 15 Փետրուար 2026-ին, Նէսս Գոզմոսի Ս. Կարապետ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի իրենց հարազատին՝

ՀՈՒՓՍԻՄԷ ՄԵԼԵՈՆԵԱՆԻ

յիշատակին:

Հոգեհանգիստ

Տեր եւ տիկին Յարութիւն եւ Ռոզ-Մարի Կարդեան եւ զաւակները Ասատուր եւ Ռուբէն, տեր եւ տիկին Յակոբ եւ Սիլվա Խաչիկեան եւ զաւակը Մելքոն կը ծառուցանեն թէ Կիրակի, 15 Փետրուար 2026-ին, Գոքիսիոյ Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, ս. եւ անմահ պատարագի աւարտին, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի իրենց մօր եւ մեծ մօր՝

ՍՈՆԻԱ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ

մահուան Ա. տարելիցին առիթով: Հոգետուրճ՝ եկեղեցւոյ սրահին մէջ:

Նուիրատուութիւններ

Իրենց մօր եւ մեծ մօր ՍՈՆԻԱ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով կը նուիրեն.

- Տեր եւ տիկին Յարութիւն եւ Ռոզ-Մարի Կարդեան եւ զաւակները Ասատուր եւ Ռուբէն, տեր եւ տիկին Յակոբ եւ Սիլվա Խաչիկեան եւ զաւակը Մելքոն՝ «Արմենիքա» պարբերաթերթին 100, Գոքիսիոյ «Չաւարեան» կեդրոնի խորհուրդին 100 եւրօ:

Իրենց խնամին ՍՈՆԻԱ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով կը նուիրեն.

- Տեր եւ տիկին Եղիա եւ Վերժին Սարգիսեան եւ զաւակները Սիմոն եւ Լուսի Գոքիսիոյ Ս. Յակոբ եկեղեցւոյ կը նուիրեն 50 եւրօ:



Տեանընդառաջի Նախատօնակի արարողութիւն

Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի տաճար ընծայման տօնին՝ Տեանընդառաջի առթիւ Նախատօնակի արարողութիւնը պիտի կատարուի՝

- Գոքիսիոյ Ս. Յակոբ եւ Նէսս Գոզմոսի Ս. Յովիան-Նու Կարապետ եկեղեցիներուն մէջ Ուրբաթ, 13 Փետրուար 2026-ի երեկոյեան ժամը 6-ին:

- Աթէնքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Նախատօնակի արարողութիւնը պիտի կատարուի Ուրբաթ, 13 Փետրուար 2026-ի երեկոյեան ժամը 7-ին:

- Ալեքսանտրուպօլիի Ս. Կարապետ եկեղեցւոյ մէջ Նախատօնակի արարողութիւնը պիտի կատարուի Ուրբաթ, 13 Փետրուար 2026-ի երեկոյեան ժամը 4-ին:

- Գոմոթիսիի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Նախատօնակի արարողութիւնը պիտի կատարուի Ուրբաթ, 13 Փետրուար 2026-ի երեկոյեան ժամը 6-ին:

- Թեսաղոնիկէի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Նախատօնակի արարողութիւնը պիտի կատարուի Շաբաթ, 14 Փետրուար 2026-ի երեկոյեան ժամը 7-ին:

Արարողութեան աւարտին, պահելով հայ ժողովուրդի դարաւոր ավանդութիւնը պիտի վառուի Նաեւ խարոյկը:

Ուստի կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը, ներկայ գտնուելու Տեանընդառաջի արարողութեան: Ինչպէս Նաեւ կը քաջալերենք ծնողները, որպէսզի իրենց մանուկ զաւակները բերեն եկեղեցի, ընծայաբերելու համար Ս. Խորանին:



Կրօնական ժողով



Հետաքրքրական նիւթով ձեռնարկ մը Ֆիքսի մէջ

Հայ Կապոյտ Խաչի Ֆալիրոյի «Նա-չիրի» մասնաճիւղի վարչութիւնը կը հրաւիրէ ձեզ հետաքրքրական եւ այժմեական ներկայացման մը՝ «Արհեստական Բանականութիւնը» (Τεχνητή Νοημοσύνη - AI) նիւթով: Տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի, 18 Փետրուարին, երեկոյեան ժամը 6-ին, Նէսս Գոզմոսի «Արամ Մանուկեան» ակումբի «Աւետիքեան» սրահին մէջ:



Ձեռնարկը առիթ մըն է, որ առաջին ծանօթացում մը ունենանք Արհեստական Բանականութեան հետ եւ անդրադարձ կատարենք, թէ ինչպէս ան արդէն ներկայ է մեր առօրեային մէջ:

Նիւթը պիտի ներկայացնէ ընկերուի Երան Թերզեան:

Ուրախ պիտի ըլլանք ձեզ տեսնելու, որպէսզի միասին գրուցենք եւ կարծիքներ փոխանակենք այս նիւթին շուրջ:

Կը հրաւիրուին մասնաճիւղի անդամուհիները, Հ.Կ.Խ.Ի Շրջանային վարչութիւնը, քոյր մասնաճիւղերը եւ վերոնշեալ նիւթով հետաքրքրուած բոլոր հայրենակիցները: ԿԱՐՉՈՒԹԻՒՆ



Միօրեայ պտոյտ դէպի Քեֆալարի Արղուս

Հ.Կ.Խաչի Աթէնքի «Ծովինար» մասնաճիւղի վարչութիւնը կը կազմակերպէ միօրեայ պտոյտ դէպի Քեֆալարի Արղուս-Նաֆիլիօ Կիրակի, 8 Մարտ 2026-ին:



Կեսօրին պիտի ճաշենք ծանօթ «Տիղիա» ճաշարանին մէջ, ապա պիտի այցելենք ծովեզերեայ, գեղեցիկ Նաֆիլիօ քաղաքը: Երթուղարձ՝ 25 եւրօ:

Մեքնում առաւօտեան ժամը 8-ին Մարուսիի Փանայիա Վլախերնոն եկեղեցւոյ առջեւէն, ժամը 8:30-ին Ինթերքոնիսենթալ հիւրանոցին առջեւէն, ժամը 8:45-ին Գոքիսիոյ Փերիվոլաքիէն:

Արձանագրութիւններու համար հեռաձայնել ընկերուիները՝ Հայկան Իւթի-ճեանին 6981094360, 2109418144 եւ Ռիթա Հալաճեանին 6976355226:

ԿԱՐՉՈՒԹԻՒՆ

Advertisement for 'ԱԹԷՆՔ 30ՆԱՍՏԱՆ' event, featuring a cityscape background and text in Armenian and English. Includes dates '30 ԱՊՐԻԼ ԵՒ 1-2-3 ՄԱՅԻՍ 2026' and '31 ՄԱՐՏ 2026'.

«ԱԶԱՏ ՕՐ» օրաթերթը
Խմբագրատուն՝ Արիստոթելուս 8 – Զալիթեա 17671
Քե. 210 9575011 եւ 210 9521359
Տնօրէն՝ Մայք Չիլիսկիրեան
Կայքէջ՝ www.azator.gr - e-mail: azatordaily@gmail.com
FB: AZAD OR Armenian Daily Newspaper of Greece
Ղրամատան հաշիւ՝ ALPHA BANK - IBAN GR 4901 401 160 116 00 200 200 9080
Տարեկան բաժանորդագրութիւն՝ pdf եւ տպագիր 160 եւրօ, pdf կամ տպագիր 120 եւրօ
Թերթի ելեկտրոնային տարբերակը լոյս կը տեսնէ ամէն օր, Ուրբաթ օրերը կը տպուի:

«AZAT OP» (ΕΛΕΥΘΕΡΗ ΗΜΕΡΑ) Ημερήσια Αρμενική Εφημερίδα
Ιδιοκτησία: ΕλληνοΑρμενικό Φόρουμ- Μορφωτικό & Πολιτιστικό Σωματείο
Αριστοτέλους 8 – 17671 Καλλιθέα
Έκδοση - Διεύθυνση: Μάικ Τσιλιγκιριάν
Ιστοσελίδα: www.azator.gr - e-mail: azatordaily@gmail.com -
FB: AZAD OR Armenian Daily Newspaper of Greece
ALPHA BANK - IBAN GR 4901 401 160 116 00 200 200 9080
Ετήσια συνδρομή: Pdf & έντυπο 160 ευρώ, pdf ή έντυπο 120 ευρώ
Εκδίδεται ηλεκτρονικά τις εργάσιμες μέρες, την Παρασκευή διατίθεται και έντυπο φύλλο.

«AZAD OR» - Armenian daily newspaper of Greece - 8 Aristotelous 17671, Kallithea – GREECE
Tel. 210 9575011 & 210 9521359 e-mail: azatordaily@gmail.com, web site: www.azator.gr
FB: AZAD OR Armenian Daily Newspaper of Greece
ALPHA BANK - IBAN GR 4901 401 160 116 00 200 200 9080

Υπ. τυπογραφείο Αφοι ΜΥΛΩΝΑ Ο.Ε. ΓΡΑΦΙΚΕΣ ΤΕΧΝΕΣ - ΜΥΛΑΟΝΤΟΣ 6 ΠΕΡΙΣΤΕΡΙ - ΤΗΛ. 210 5770685